Աշխատանքի ծածկագիր 0291

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ.Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 3-րդ, 8-րդ, 15-րդ, 27-րդ, 29-րդ, քաղաքացիական օրենսգրքի 5-րդ, 8-րդ, 12-րդ, 19-րդ, 28-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 3

Բողոքաբերի փաստարկը հիմնավոր չէ, քանի որ հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 222-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կարգավորումներից: Միավորը ենթակա չէ վերանայման:

Հարց 8

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 346-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի կարգավորումներից, քանի որ անձին անգործունակ ճանաչելու դատական ակտը անձի իրավական վիճակին վերաբերյալ դատական ակտ է: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 15

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 255-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից, որով խնամակալության և հոգաբարձության մարմնին գործունակ ճանաչելու դիմում ներկայացնելու իրավասություն տրված չէ, այլ տրված է այդ թվում խնամակալին: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 27

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բացառվում է հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Հարց 29

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բ/ տարբերակն է, որ բխում է ՔԴՕ 86-րդ հոդվածի 1-ին մասի և 203 հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Քաղաքացիական օրենսգիրք բաժին

Հարց 5

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ճիշտ պատասխանը բխում է ԵԷԴ/0313/02/16 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի որոշումից, համաձայն որի հետաքննության մարմնի որոշումները, բացատրությունները և այլ ապացույցները հանդիսանում են թույլատրելի ապացույց փոխառության հարաբերությունները հաստատված համարելու համար:

Հարց 8

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ճիշտ պատասխանը բխում է ՔՕ 512-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից:

Հարց 12

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ճիշտ պատասխանը բխում է ՔՕ 615-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Հարց 19

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, ճիշտ պատասխանը բխում է ԵԿԴ/1418/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումից:

Հարց 28

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, ճիշտ պատասխանը բխում է ՔՕ 1131-րդ հոդվածի 4-րդ մասից:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 0291 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 27-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ